600.0216.06.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2018 թվականի №216Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի №214Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի մարտի 21-ի և ապրիլի 27-ի №11 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №214Ա՝

   1) որոշման մեջ «Ուրասար» բառը փոխարինել «Ստեփանավան» բառով, իսկ «մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը» բառերը՝ «մինչև 2018 թվականի հունիսի 7-ը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերության «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0549 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 2434 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ՇՇ90-Հ6-65, 880 կՎտ, 2017թ.,
2) գեներատոր №1՝ ԱԳ834.400.50.S10, 834 կՎտ, 2017թ.,
3) հիդրոտուրբին №2՝ ՇՇ90-Հ6-65, 880 կՎտ, 2017թ.,
4) գեներատոր №2՝ ՍԳ2-800-10, 800 կՎտ, 2013թ.,
5) հիդրոտուրբին №3՝ ՇՇ90-Հ6-65, 880 կՎտ, 2017թ.,
6) գեներատոր №3՝ ՍԳ2-800-10, 800 կՎտ, 2013թ.:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №O.AB.100.11CB.ESC.4.4562.16 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած վեց միլիոն ութսունհինգ հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 7-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
6 հունիսի 2018թ.